ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ՝ 1895-1896թթ. ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «CHOCOLATERIE D'AIGUEBELLE» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԲԱՅԻԿՆԵՐՈՒՄ

Ինեսա Ստեփանյան

1895-1896թթ. ընթացքում, փորձելով հակազդել Օսմանյան կայսրությունում հայերի իրավունքներին, Հայկական հարցին վերջ տալու նպատակով կազմակերպվեցին կոտորածներ, որոնց զոհ գնաց շուրջ 300000 հայ[1]: Կոտորածներն ընդգրկել են Օսմանյան կայսրության 12 վարչական միավորներ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթ: Արևմտահայերի կոտորածներից բացի, ավերվել և հրկիզվել են նրանց մշակութային հաստատությունները, հատկապես դպրոցներն ու եկեղեցիները: Այդ իրադարձությունները ժամանակին մեծ արձագանք են գտել և լայնորեն լուսաբանվել են թե՛ տեղի, թե՛ միջազգային մամուլի կողմից: Բացի այդ խնդրին անդրադարձել են բազմաթիվ գրքեր և պարբերականներ:

Ի տարբերություն եվրոպական պետությունների վարած քաղաքականության՝ բոլորովին այլ էր ժամանակի եվրոպական մամուլի, մտավորականների և հասարակական գործիչների արձագանքը: Հայ ժողովրդի դեմ իրագործվող հրեշավոր քաղաքականությունը խստորեն դատապարտեցին Ժան Ժորեսը, Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը, Յոհաննես Լեփսիուսը և ուրիշներ՝ իրենց կառավարություններից պահանջելով կտրուկ միջոցներ գործադրել՝ այդ ամենը դադարեցնելու համար: Այդ ժամանակվա եվրոպական մամուլում բազմաթիվ հոդվածների հրապարակումներից բացի հայտնվեցին մի շարք լուսանկարներ, թուրք ոճրագործների և հատկապես սուլթան Աբդուլ Համիդ II-ի ծաղրանկարները, փոստային բացիկներ և այլն:

Ոչ պակաս տարածված էին նաև գովազդային ներդիր-բացիկները: Դրանցում պատկերվում էին տարբեր թեմատիկ նկարներ կամ տեսարաններ, իսկ դարձերեսին՝ համապատասխան նյութի մասին բովանդակային թռուցիկ գրություններ: Այսպիսի ներդիր-բացիկները մեծ տարածում գտան տարբեր նախասիրություններ ունեցող մարդկանց շրջանում և դարձան թեմատիկ հավաքածուների առարկա:

Հոդվածում կդիտարկենք ֆրանսիական «Chocolaterie d'Aiguebelle»[2] շոկոլադագործական ընկերության՝ 1890թթ. հայերի կոտորածների կապակցությամբ թողարկած բացիկները: Այդ պատկերազարդումների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում, քանի որ արժեքավոր տեղեկություններ հաղորդելուց բացի, դրանցում խիստ արտահայտիչ և յուրօրինակ կերպով ցուցադրվել են հայության դեմ գործադրված բռնությունները:

«Շոկոլատոլի դ'Էգեբել» ընկերությունը հիմնադրվել է Էգեբել[3] վանքի վանականների կողմից: 1868թ. Էգեբել վանքի հարևանությամբ ստեղծվում է «Chocolaterie d'Aiguebelle»-ի առաջին գործարանը: Ընկերության գործունեությունն ընդլայնվեց 1885թ., երբ ղեկավարությունը ստանձնեց Ժան-Բատիստ Շոտառը: Արդեն 1891թ. որպես կայացած արտադրություն՝ ընկերությունն իր երկրորդ գործարանը բացեց Դոնզերում[4]: Տարեցտարի ընկերության արտադրանքի ծավալներն ավելի էին մեծանում: Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1941թ., Մարոկկոյում, այնուհետև նաև Ալժիրում բացվեցին «Chocolaterie d'Aiguebelle»-ի մասնաճյուղերը: Հաղթահարելով

---

1 Հանոի Պառպի, *Սարսափի երկրին մէջ*, Կ. Պոլիս, 1919, էջ 7:

2 Մանրամասն տե՛ս ընկերության պաշտոնական կայքէջում, www.aiguebelle.com:

3 Գտնվում է Ֆրանսիայի Ռոն-Ալպ շրջանի Դրոմ դեպարտամենտում:

4 Համայնք Ֆրանսիայի հարավ-արևելքում, Ռոն-Ալպ շրջանի Դրոմ դեպարտամենտում:

տնտեսական դժվարությունները՝ ընկերությունը կայացավ և գործեց մինչև 1978թ.՝ դառնալով Ֆրանսիայի թվով ութերորդ շոկոլադագործական ֆաբրիկան: 1982թ. այն դարձավ ֆրանսիական շոկոլադագործության և հրուշակագործության «Cemoi»[5] խմբի անդամ և վերաբացվեց «Aiguebelle»-ի անունով:

Շոկոլադի վաճառքը խթանելու նպատակով ընկերությունը սկսեց թողարկել նաև պարբերական գովազդային ներդիր-բացիկներ, որոնք ապահովեցին երեք կարևոր ձեռքբերումներ: Առաջին հերթին դա նորույթ էր, որով հերթական անգամ ուշադրություն հրավիրվեց ընկերության գործունեության վրա: Երկրորդ՝ բացիկները մեծ տարածում գտան հանրության լայն շրջաններում, դարձան թեմատիկ հավաքածուների առարկա՝ ավելացնելով «Chocolaterie d'Aiguebelle»-ի հավատարիմ սպառողների քանակը: Եվ երրորդ՝ բացիկներն ունեին ճանաչողական և ուսուցողական առաքելություն: Ներդիր-բացիկների թեմաները բազմազան էին՝ ընդհուպ կենդանական և բուսական աշխարհ, բնություն, հեքիաթների հերոսներ, մշակույթի և գիտական գործիչներ, քաղաքներ, երկրներ, ճարտարապետական հուշարձաններ, պատմական իրադարձություններ, պատերազմական տեսարաններ և այլն:

Ընկերության առաջին թողարկումներից էր 1896թ. «Հայաստանի կոտորածները» («Massacres d'Arménie») խորագրով քրոմավիմագրական գովազդային բացիկների շարքը, որը բաղկացած էր 12 միավորից: Առավել ուշագրավ է այն, որ հենց այդ հավաքածուն 1900թ. միջազգային ցուցահանդեսի ժամանակ ստացավ ոսկե մեդալ[6]:

Անշուշտ, այս ձեռնարկի գաղափարախոսության հիմքում քարոզչությունն էր: Ընկերությունը նպատակ ուներ իր արտադրանքի բոլոր սպառողներին տեղեկացնել Օսմանյան կայսրությունում հայ քրիստոնյաների զանգվածային կոտորածների մասին: Աղբյուրների սակավության պատճառով դժվար է հստակ պարզել, թե ֆրանսիական շոկոլադագործական ընկերությունն ինչ նպատակներով է հայանպաստ տեղեկատվական գործունեություն ծավալել, որը հնարավորություն էր տալիս շարքային եվրոպացուն հաղորդակից լինելու արևմտահայերի ճակատագրին:

Այս բացիկներն ուշագրավ են ոչ միայն իրենց ձևավորման և գունազարդման տեսանկյունից, այլև բովանդակային առումով: Ըստ ժամանակագրության՝ առաջինը պատկերում է 1895թ. հոկտեմբերին Տրապիզոնի հայերի կոտորածը[7]: Նկարում խաղաղ, անպաշտպան բնակչության՝ կանանց, ծերերի և երեխաների սպանության տեսարան է: Տրապիզոնում դեպքերը զարգանում են ակնթարթային արագությամբ: Թալանվում են հայերի խանութները, արհեստավորների կրպակները: Այդ ամենը կատարվում էր զինվորների ու պետական պաշտոնյաների անմիջական մասնակցությամբ: Ավերվում են շրջակա բոլոր գյուղերը, ոչնչացվում են ազգային հաստատությունները, հայերի մի մասն իսլամացվում է: Ընդամենը երեք ժամվա ընթացքում Տրապիզոնում սպանվում է տարբեր հաշվարկներով 500[8]-600[9] խաղաղ բնակիչ: Հայերը կրում են նաև զգալի նյութական կորուստներ:

Հաջորդ բացիկում պատկերված են կապուչինյան[10] վանահայրերը և Մալաթիայի գերիները: Խոսքը վերաբերում է 1895թ. հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 9-ը Մալաթիայում

---

5 Մանրամասն տե՛ս ընկերության պաշտոնական կայքէջում, www. aiguebelle.com:

6 Նույն տեղում:

7 *Ternon Y., Kebebdjian J.C., L'Arménie d'Antan, HC Editions,* 2009, p. 122, տե՛ս նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետ՝ ՀՑԹԻ) գիտական ֆոնդեր, բ.-13, Ազդագրերի, թռուցիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1170:

8 Ներսիսյան Մ. Գ., Սահակյան Ռ. Գ., *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում,* Երևան, «Հայաստան», 1991, էջ 169:

9 Ternon Y., *նշվ. աշխ.*, էջ 122:

10 Կապուչիններ՝ կաթոլիկ միաբանություն՝ հիմնված 1525թ.:

տեղի ունեցած կոտորածների նկարագրությանը[11]: Չնայած նախօրոք մշակված ծրագրի համաձայն՝ զենք էր բաժանվել նաև մուսուլմաններին՝ այնուամենայնիվ այստեղ հայերը կարողացան ինքնապաշտպանություն կազմակերպել: Թուրքերը զինադադար են առաջարկում, ապա անսպասելի վերսկսում կոտորածը: Մոլեռանդ ամբոխը հարձակվում է տեղի հայկական եկեղեցու վրա, որտեղ ապաստանել էին մեծ թվով հայեր: Մալաթիայում սպանվում է ավելի քան 3000 հայ, այրվում մոտ 1000 տուն[12]:

Հավաքածուի հաջորդ բացիկում պատկերված են Արաբկիրի հայերը 1895թ. նոյեմբերի կոտորածների ժամանակ[13]: Արաբկիրում թուրքերին էին միացել նաև քրդական ավազակախմբերը: Նրանց հարձակումների ընթացքում ավերվում է մոտ 2700 տուն, սպանվում՝ 3000 հայ, ինչպես նաև առևանգվում են բազմաթիվ կանայք և երեխաներ[14]:

Կյուրինի[15] ջարդերը ներկայացնող բացիկում պատկերված է Կյուրինի ինքնապաշտպանության տեսարան՝ վերնագրված հետևյալ կերպ՝ «Գյուրունի ինքնապաշտպանությունը 1895թ. նոյեմբերի 12-ին»: Չնայած հայերի՝ մոտ 4 ժամ տևած դիմադրությանը՝ բնակավայրը պաշարվում է շուրջ 2000 քրդերի ու թուրքերի կողմից, իսկ նոյեմբերի 28-ին՝ վերջնականապես գրավվում: Հայերին պատկանող տներն այրվում և ավերվում են, մեծ թվով կանայք՝ հափշտակվում քրդերի կողմից[16]:

Չնայած այն բանին, որ կառավարությունը նախապես խոստացել էր պաշտպանել օտարերկրացիների կյանքն ու ունեցվածքը, այդուհանդերձ համիդյան կոտորածների զոհ դարձան նաև բազմաթիվ օտարերկրացիներ, այդ թվում՝ հոգևորականներ ու միսիոներներ:

Թուրք զինվորի կողմից հայր Սալվատորեի սպանության տեսարանը պատկերված է շարքի հերթական բացիկում: Դեռևս 1895թ. հոկտեմբերի վերջին Ենիջե կոլի ֆրանցիսկյան հոգևորականները գտնվում էին Մարաշի թուրքական իշխանությունների պաշտպանության ներքո: Սակայն 1895թ. նոյեմբերի 18-ին Մուջուկդերեսիում սպանվում է ֆրանցիսկյան հոգևորական հայր Սալվատորեն[17]: Վերջինիս սպանությունը թուրք զինվորների կրոնական մոլեռանդության ակնհայտ դրսևորումն էր, քանի որ կաթոլիկ հոգևորականների սպանությունը չէր մտնում համիդյան կոտորածների ծրագրի մեջ:

«Massacres d'Arménie» շարքի բացիկներից մեկում ներկայացվում են 1896թ. Կ. Պոլսի Ղալաթա թաղամասում հայերի կոտորածները[18]: Պատկերված է սպանդի տեսարան՝ փողոցում ընկած հայ զոհերի մարմիններով: Կ. Պոլսում կոտորածները սկսվել էին դեռևս 1896թ. օգոստոսի 14-ին՝ «Բանկ Օտտոմանի» գրավումից հետո, որի հետևանքով քաղաքում մեծ թվով հայեր զոհվեցին, մոտ 6000 մարդ[19]:

Այսպիսով, ֆրանսիական հանրահայտ ընկերության այս հայանպաստ գործունեությունը՝ բացիկների թողարկման տեսքով, քարոզչական առաջին հաջողված փորձերից մեկն էր, որն ուղղված էր 20-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած զանգվածային կոտորածները դատապարտելուն: «Chocolaterie d'Aiguebelle»-ի քարոզչական

---

11 ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բ.-13, Ազդագրերի, թռուցիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1170:

12 Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց*, Պէյրութ, 1961, էջ 901:

13 Ternon Y., Kebebdjian J. C., *նշվ. աշխ.*, էջ 122, տե՛ս նաև ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բ.-13, Ազդագրերի, թռուցիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1315:

14 *Братская помощь пострадавшим въ Турции армянамъ,* Москва, 1897, стр. 52:

15 Կյուրին՝ գյուղաքաղաք Սեբաստիայի նահանգում:

16 Ternon Y. , Kebebdjian J. C., *նշվ. աշխ.*, էջ 122:

17 Նույն տեղում, էջ 122, ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բ.-13, Ազդագրերի, թռուցիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1171:

18 ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բ.-13, Ազդագրերի, թռուցիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1205:

19 *Լեո, Անցյալից* (հուշեր, թղթեր, դատումներ), «Խորհրդային Կովկաս», Թիֆլիս, 1925:

և հայանպաստ գործունեությունը մեկնարկ դարձավ հետագայում հայերի զանգվածային կոտորածներին և Հայոց ցեղասպանության տարբեր տարելիցներին նվիրված քարոզչական բացիկների թողարկման համար:

Արևմտահայության՝ 1895-96թթ. զանգվածային կոտորածների արտացոլումը ֆրանսիական «Chocolaterie d'Aiguebelle» ընկերության գովազդային բացիկներում

Ինեսա Ստեփանյան

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է ֆրանսիական «Շոկոլատըղի դ'Էգեբել» ընկերության՝ 1896թ. թողարկած 12 միավորից բաղկացած գովազդային ներդիր-բացիկների շարքը՝ նվիրված 1895-1896թթ. հայերի՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կոտորածներին: Շարքն անվանվել է «Հայերի կոտորածները»: Հոդվածում ներկայացված բացիկներում պատկերված են Տրապիզոնի (1895թ.), Մալաթիայի (1895թ.), Արաբկիրի (1895թ.), Կյուրինի (1895թ.), Կ.Պոլսի Ղալաթա թաղամասի (1896թ.) հայերի ջարդերը, ինչպես նաև ֆրանցիսկյան հոգևորական հայր Սալվատորեի սպանությունը(1895թ.): Այս քայլը կարևոր էր հատկապես Եվրոպայի ուշադրությունը հայերի կոտորածների վրա հրավիրելու տեսանկյունից:

Բանալի բառեր՝ կոտորածներ, ջարդեր, հայեր, բացիկներ, «Շոկոլատըղի դ'Էգեբել» («Chocolaterie d'Aiguebelle»), Օսմանյան կայսրություն:

The reflection of the 1895-1896 Armenian massacres in the French "Chocolaterie d' Aiguebelle" company postcards

Inessa Stepanyan

Summary

This article refers to the issue of 12 advertisement postcards devoted to the Armenian massacres of 1895-1896 by the French Company "Chocolaterie d'Aiguebelle" in 1896. It was titled "Massacres d'Arménie". The postcards, presented in the article, depict the Armenian massacres in Trabzond (1895), Malatia (1895), Arabkir (1895), Kyurin (1895), the Galatha district in Constantinople (1896) and the murder of the Franciscan priest father Salvatore. Such an approach helped to draw the attention of Europe to the massacres of Armenians.

Keywords: Armenians, massacre, postcards, Ottoman Empire, "Chocolaterie d'Aiguebelle".

Отражение сцен массовых истреблений западных армян 1895-96 гг. в открытках французской компании “Chocolaterie d’aiguebelle”

Инесса Степанян

Резюме

Статья посвящена выпуску 12 рекламных вкладышей-карточек, отражающих резню армян 1895-1896гг. в Османской империи, которые были изданы в 1896г. французской компанией "Chocolaterie d’Aiguebelle". Серия назвалась "Резня армян". На карточках, представленных в статье, отображены погромы армян Трапизона (1895), Малатии (1895), Арабкира (1895), Кюрина (1895), квартала Галаты в Константинополе (1896), а также убийство францисканского священника падре Сальваторе (1895). Выпуск карточек способствовал привлечению внимания Европы к истреблению армян.

Ключевые слова: резня, истребление армян, Османская империя, карточки, "Chocolaterie d’Aiguebelle".